

տանոցի տան իւրոյ, եւ զաւագ երիցունսն եւ զպաշտօնեայս դասակցել ընդ համօրէն ուխտի եկեղեցեացն Միտուանայ, սրբազնագոյն իմն եւ մեծագոյն քան զյոզունս յաշխարհախումբ ժողովոցն Հայոց՝ կազմելով յայսմ հանդիսական աւուր, յետ բազում եւ երկար աւուրց եւ ամաց դադարման այսգունակ հանդիսափայլութեանց:– Չափաբան Բաբունն Վահրամ վիպասան՝ ասէ.

«Յայնժամ Հայոց բովանդակեալ  
Եւ ՚ի Տարսոն քաղաքն եկեալ.  
Կաթողիկոսն ՚ի մէջ կացեալ՝  
Չեկեղեցին անդ ժողովեալ,  
Եւ օրինօք զԼեւոն օծեալ,  
Տան Թորգոմայ թագաւորեալ,  
Յարքայական աթոռ նստեալ,  
Եւ ՚ի բարիս եւս յաջողեալ», եւ այլն:

Մերայինք՝ կաթողիկոսի մերում ընծայեն զկատարումն թագաւոր-օրհնէից, որպէս վայել իսկ էր, եւ ոչ է ընդ այս երկբայել. իսկ օտարք, որպէս կանխեցաք ասել, ծերունոյ արքեպիսկոպոսին Մակոնցայ Կոնրադի՝ երեսփոխանի քարտուղարի կայսերն, որով եւ Սրբազան Քահանայապետին, (որոյ եւ նախապատիւ ծիրանէկիր կարդինալ էր). ստոյգ եւ այս, զի սա նշանամատոյց եւ թագադիր եղէ, իսկ կաթողիկոսն մեր (Գրիգոր Ապիրատ) օրհնիչ եւ օծիչ վսեմական գլխոյն Լեւոնի:... Այլ ո՞ւր էր երրորդն աջ հանդիսադիր, յերկոտասան ամաց հետէ գրեաթէ անանջատ ՚ի հզօրին աջոյ, եւ որ զոյգ նմին ընդ երկար երկնէր զնա ՚ի գահ արքայական. ո՞ւր ձայնն հոգիացուցիչ՝ որ զամս քսան եւ հինգ հնչէր յեկեղեցուջս Տարսոնի. զիա՞րդ ոչ շարժեցան շրթունքն շնորհաշուք՝ որ կրկին եւս մեծացուցանելոց էին զօսն աւուրս մեծի, եւ անշուշտ աւանդելոց մեզ յետնոցս միւս եւս հրաշագան ճառ կացրդական:... Յաճախ այսպիսի թուին օրէնք երկրաւոր բաստից, թերի իմն թողուլ ամենայն փառափայլ բոլորոյ մեծամեծար ուրախութեանց: Կիսամաւ եւեթ կանխեալ գողացեալ էին երկինք զՄիբելին իւրեանց եւ զմեր եւ զԼեւոնի, զիրեղէն լեզու եւ զհոգի Լամբրունեցոյն: Այլ թէ ՚ի նմին նախանկատեալ պահու հեղման սրբագործակ միւռոնին՝ ՚ի գլուխ նորընծայ թագաւորին, խայտացի՞ն արդէօք սրբասնեալ նշխարք նորին ՚ի շիրմաց Սկեւոյ, զայն